զայս և զայն արարեալ են, և հրամայէ օրինօք դատարանի քանդել և բառնալ զնոսա․ չունիմք ինչ ասել առ այս, ոչ բռնութեամբ և ոչ 'ի ծածուկ արարեալ ինչ իցէ մեր, որպէս 'ի ժամանել երկրորդ հրովարտակին, Գանձապետն, որ Տեղապահ էր յայնժամ Կուսակալին, սակս գործադրութեան նորին գրեալ էր առ մեծամեծս քաղաքին, եւ դուք գիտութեամբ Մուվէլլային, Դատաւորին և մեծամեծաց քաղաքին արարեալ՝ յայտ արարիք մեզ թէ՝ ըստ հրամանի Արքային եւ օրինաց դատարանի այսոքիկ են իրաւունք բաժանորդութեան, և գրեցիք Իլամ և Հէօճճէթ, և մեք սպասեմք առնուլ լուր ինչ 'ի մայրաքաղաքէն, զի լցցուք զթերի մնացեալսն․ զի աւելի քան զայս ոչ կարեմք ասել ինչ և կամ առնել․ գուցէ ցասնուցու Արքայ 'ի վերայ մեր։ Իսկ Քաղաքապետն տարակուսեալ և պաշարեալ ցուցանէր զինքն․ Դատաւորն 'ի բաց հրաժարէր և ոչ առնոյր յանձն պատասխանել Կուսակալին և կամ ժողով գումարել, եւ Հայք եւս այնպէս պատասխանէին, այլ եթէ երկեղուկս առնելով զնոսա ասէ՝ ստիպիմ գրել և ծանուցանել զամենայն ինչ Տեառն իմոյ, որով վասթարանայ գործն և հասանին ձեզ չարիք։ Հայք թողին զնա 'ի կամս նորին և դարձան 'ի տեղիս իւրեանց, զի յայտնապէս գիտացին թէ՝ ինքն 'ի դրդմանէ Յունաց վրդովեալ է զԿուսակալն։

Դատաւորն զիջեալ յաղաչանս Քաղաքապետին՝ գումարեաց ժողով և ընթերցաւ զգիր Կուսակալին, և արձակեալ զժողովն՝ մնացին ինքեանք եւ Ոստիկան Կուսակալին ('ի 14 Մարտի) և ետուն կոչել զՀայս․ և զկնի բանից, Քաղաքապետն առաջադրէր գրել Դատաւորին թուղթ ինչ օրհնութեան՝ ինքն և Հայք գրել մէն մի գիր աղաչանաց, և ըստ արժանի դատելոյ Դատաւորին ծանուցանել Բդեշխին զխնդիրն, բայց թախանձէր զՀայս առաքել զոմն 'ի վարդապետաց 'ի Դամասկոս, իբր տալ պատասխանի ամենայն հարցմանց Բդեշխին և շիջուցանել զբարկութիւն սրտի նորա։ Ոչ երբէք հաճեցան Հայք ընդ բանս Քաղաքապետին, զի առաջին գիր Կուսակալին էր 'ի ձեւ հարցման, և երկրորդն վճիռ, և չէր ինչ հարկ առաքել զոք առանց խնդրելոյ Բդեշխին․ թէպէտ գնացին ամենք յառաջադոյն